№ 9 (13)

ISSN 1829-4820



Филиал МГУ имени М.В.Ломоносова
в г. Ереване

Журнал входит в список
периодических изданий ВАК РА

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

2022

Երևան քաղաքում Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղ

Филиал Московского государственного университета им. М.В. Ломоносова в г. Ереване

M. Lomonosov Moscow State University, Yerevan branch

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

9 (13)

ԵՐԵՎԱՆ 2022
ЕРЕВАН 2022
YEREVAN 2022

Երաշխավորվել է տպագրության Երևան քաղաքում Մոսկվայի Մ.Վ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից

Печатается по решению Ученого совета филиала Московского государственного университета им. М.В. Ломоносова в г. Ереване

Reprinted by decision of the Academic Council of the branch of the Moscow State University M.V. Lomonosov in Yerevan

«ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ» գիտամեթոդական հանդեսի առաքելությունը ՀՀ-ում ռուսագիտության՝ որպես լեզվաբանության ճյուղի մասսայականացումն է, ռուսաց լեզվի ուսումնասիրման նկատմամբ հետաքրքրություն առաջացնելը, օտարերկրյա հետազոտողների ուշադրությունը հայ գիտնականների մշակումներին հրավիրելը, դրանով իսկ հայ ռուսագիտության մասսայականացումն է, համատեղ ծրագրերի, դրամաշնորհների մշակման հնարավորության ընձեռումը, մագիստրոսների ներգրավումը հետազոտական աշխատանքներին:

Назначение научно-методического журнала «**ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ**» рассматривается нами в ракурсе популяризации в РА русистики как отрасли языкознания, привлечения интереса к изучению русского языка, привлечения внимания зарубежных исследователей к разработкам армянских ученых и тем самым популяризации армянской русистики, возможности разработки совместных проектов, грантов и пр., привлечения магистрантов к научно-исследовательской работе.

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ // Научно-методический журнал, №9 (13). / Глав. ред. Саркисян И.Р.; сост.: Акопян А.С. – Ереван: Изд-во МГУ, 2022. – 266 с.

ISSN 1829-4820

Журнал входит в список периодических изданий ***ВАК РА***

ORCID: 0000-0001-9263-6791

© Филиал МГУ им. М.В. Ломоносова в г. Ереване

СТРАТЕГИИ ФОРМИРОВАНИЯ И РАЗВИТИЯ СОЦИОКУЛЬТУРНОЙ КОМПЕТЕНТЦИИ СТАРШЕКЛАССНИКОВ

Игорь Карапетович Карапетян
igorkarapetian@gmail.com

Д.п.н., профессор,
Профессор кафедры романо-германских языков и методики их преподавания,
Армянский государственный педагогический университет имени Хачатура Абовяна,
Ереван, Республика Армения

Элен Самвеловна Аветисян
avetisyan.elen@inbox.ru

Преподаватель английского языка базовой гимназии,
Армянский государственный педагогический университет имени Хачатура Абовяна,
Ереван, Республика Армения

АННОТАЦИЯ

В статье представлены стратегии формирования и развития социокультурной компетентности вуза с точки зрения коммуникативно-когнитивного, концептуального подходов. Сделана попытка обосновать эффективность применения метакогнитивных, когнитивных, компенсаторных, графических и других стратегий в процессе обучения социокультурным феноменам с учетом особенностей представления не только языковой картины мира обучающихся, но и их концептуальная картина. Задача состоит в смоделировании условий и содержания развития социокультурной компетенции носителей языка в образовательных условиях, исследуя ритуалы, церемонии, праздники и торжества носителей языка в образовательных целях.

Ключевые слова: социокультурная компетенция, стратегия, когнитивная, компенсаторная, аффективно-эмоциональная, графический, концептуальный, технология, языковая картина, концептуальная картина.

Հանրամշակութային կոմպետենցիայի զարգացումը կարևոր պայման է սովորողների հաղորդակցական կոմպետենցիայի զարգացման համար: Լայն իմաստով հանրամշակութային կոմպետենցիան ներկայացնում է սովորողների հենքային գիտելիքները, որոնք ներառում են ուսումնասիրվող լեզուն ներկայացնող մարդկանց մշակույթը, ավանդույթները, սովորույթները, կարծրատիպերը, պատմությունը, տարաբնույթ իրակություններ: Կարելի է առանձնացնել հատկապես հասարակական իրակություններ, ստանդարտ իրադրություններում վարքագծի մոդելները:

Համապատասխան վերլուծությունը ցույց է տալիս, որ հանրամշակութային կոմպետենցիայի զարգացումը կարևոր պայման է ոչ միայն հաղորդակցական, այլև լեզվաբանական, խոսութային և այլ կոմպետենցիաների ձևավորման և զարգացման համար:

Հանրամշակութային հասկացույթների ուսուցման տեսանկյունից առաջին պլան են մղվում մշակութային տիրույթի [1, 3], հասարակական տիրույթի [5] ուսումնասիրության նվիրված աշխատանքները: Հանրամշակութային հասկացույթների բովանդակային և գործառական բնութագրերի բացահայտման տեսանկյունից առանձնանում են Ե.Ա. Նիլսենի, Ն.Ն. Ռոմանովիչի, Յ.Ս. Ստեպանովի [4, 6, 8] աշխատանքները:

Հանրամշակութային երևույթների ուսուցման ռազմավարությունների ընտրության տեսանկյունից կարևորվում են Օ՛Մալիի, Ա. Չամոտի և Ռ. Օքսֆորդի աշխատանքները [11, 12]: Ե. Տարոնեն, Ս. Ֆաերչը, Գ. Կասպերը հանգամանորեն ներկայացրել են հաղորդակցական ռազմավարությունը մեջլեզվային հաղորդակցության ընթացքում [13]: Լ.Ա. Սոբինովան ուսումնասիրության առարկա է դարձրել ուսուցման ճանաչողական ռազմավարությունը [7]:

«Ռազմավարություն» հասկացությունը սահմանվում է որպես «ուսումնասիրվող լեզվում լեզվաբանական և հանրալեզվաբանական կոմպետենցիաների զարգացման փորձ, որը հետապնդում է միջլեզվային կոմպետենցիայի ներառման նպատակ» [13: 67]: Ենթադրվում է, որ ռազմավարությունը ներառում է «օտարալեզու հմտությունների զարգացման նպատակով սովորողների կողմից նախաձեռնվող գործողությունները, միտված նոր լեզուն յուրացնելուն, պահպանելուն և կիրառելուն» [12: 18]: Ըստ Օ՛Մալիի՝ ռազմավարությունը ներկայացնում է յուրահատուկ մտածողություն և վարքագիծ, որը կիրառում է աշակերտը նոր տեղեկատվության գիտակցման, ուսումնասիրության և մտապահման համար» [11: 1]:

Ինչպես հայտնի է օտար լեզուների դասավանդման մեթոդիկայից, ճանաչողական ռազմավարությունները միտված են տարատեսակ գիտելիքների գիտակցաբար յուրացնելուն: Դա վերաբերում է թե՛ լեզվական, թե՛ հենքային, թե՛ մշակութային, թե՛ գործաբանական գիտելիքներին: Ճանաչողական ռազմավարությունները փոխառված են անձի ճանաչողական տեսությունից և կապված են աշխարհի մասին կարևոր տեղեկատվություն ստանալու եղանակներով: Ընդհանուր առմամբ, ճանաչողական ռազմավարությունը ենթադրում է ուսումնասիրվող նյութի հասկանալը, մտապահելը և վերատադրելը [7: 183–186]:

Դպրոցում հիմնականում կիրառվում է ավանդաբար ճանաչողական ռազմավարություն: Սովորողները շարունակաբար ավտոմատացնում են լեզվի մասին իրենց գիտելիքները, փորձում են ընդլայնել հենքային գիտելիքները, կարևորում են ընթացակարգային և դեկլարատիվ գիտելիքները, մտապահում են տեղեկատվությունը և այլն:

Վերճանաչողական ռազմավարությունը միտված է սովորողի անելիքի գիտակցմանը, նրա ռազմավարությունների կիրառմանը:

Վերճանաչումը վերգիտելիք է, «գիտելիք գիտելիքի մասին», այսինքն՝ գիտակցաբար գնահատելու կարողություն, թե որտեղ եմ ես տիրապետում գիտելիքին և ինչ դեռ պետք է անել՝ գիտելիքի աստիճաններով ավելի

վեր բարձրանալու համար: Սա նշանակում է, որ ժամանակակից ուսուցիչը ոչ միայն տալիս է երեխային գիտելիքներ, այլև օգնում է արձագանքել, թե ինչպես է այդ գիտելիքը ստանում, որ երեխան իմացել է, թե ինչպես է ստացել նոր գիտելիքներ, ինչ դեռ չգիտի և ինչ է պետք անել սեփական գիտելիքների կամ հմտությունների մակարդակը բարձրացնելու համար: Հատկանշական է այն, որ ուսուցիչները կարող են կիրառել վերճանաչողական ռազմավարություն, առանց գիտակցելու, թե ինչ գործիքակազմ է կիրառվում իր կողմից: Ուսուցիչը պետք է գիտակցի, թե ինչպես է գիտելիքը ներմուծվում, ինչպես է այն յուրացվում աշակերտի կողմից, թե ինչ ռազմավարություններ են սովորողները կիրառում:

Վերաճանաչողական ռազմավարությունները կիրառելիս նույնպես սովորողները կիրառում են համեմատական և գրաֆիկական ռազմավարություններ: Օրինակ՝ սովորողները փորձում են բացահայտել հայերենի և անգլերենի ընդհանրությունները և տարբերությունները քերականական, բառային, ոճական և այլ մակարդակներում: Նրանք պետք է վերլուծեն, միակցեն, համադրեն: Այդպիսի աշխատանքը պահանջում է նրանից կիրառել վերաճանաչողական ռազմավարություն: Այդ ռազմավարության դերն ավելի է կարևորվում, երբ սովորողները փորձում են ճանաչել և յուրացնել մայրենի և ուսումնասիրվող լեզուները ներկայացնող հանրամշակութային երևույթները: Մի բան է ներկայացնել ուսումնասիրվող լեզվում շրջանառվող հանրամշակութային իրակությունները /ճանաչողական ռազմավարություն/, մեկ ուրիշ բան է, երբ փորձ է արվում բացատրել դրանց ծագումը, կիրառման ոլորտները, թարգմանության դժվարությունները, մեկնաբանելու առանձնահատկությունները /վերճանաչողական ռազմավարություն/: Բրիտանական խոհանոցի ուսումնասիրությունը կարևորվում է օտար լեզվի ուսուցման համարյա բոլոր մեթոդական համակարգերում: Դա վերաբերում է թե՛ տեքստերի, թե՛ վարժությունների ընտրությանը: Այլ հարց է, թե ինչպես են իրականացնում անցումը ճանաչողական ռազմավարությունից վերճանաչողական ռազմավարությունը:

Նշված համատեքստում կարևոր է նաև հստակեցնել, թե ինչն են համարում ուսուցման միավոր օտար լեզու ուսումնասիրելիս: Այն առումով, որ բառը, արտահայտությունը կամ տեքստը սահմանափակում են ուսումնասիրության դաշտը: Ըստ այդմ, կարևորվում է կոնցեպտի կամ հասկացույթի դերը, քանի որ այն հնարավորություն է տալիս ընդհանուր պատկերացում ունենալ ուսումնաիրվող լեզվամշակութային, հանրամշակութային երևույթների մասին: Այս համատեքստում խնդիր է դրվում հստակեցնել, թե ինչ հասկացույթներ ուսումնասիրել, որոնք արժեքավոր են հանրամշակութային կոմպետենցիայի զարգացման տեսանկյունից: Օրինակ՝ կարելի է համեմատել «Ժամանակ», «Տարածություն», «Սեր» հասկացույթները, դրանց իմաստային-զուգորդական դաշտերը, այդ դաշտերում շրջանառվող հասկացությունները, տարբեր արտահայտություններ: Նշված և այլ հասկացույթներ ամբողջական պատկերացում են տալիս ուսումնասիրվող լեզվի հանրամշակութային երևույթների մասին, քանի որ նրանք մարդու հոգեկանում արատացոլված մենթալ բառապաշարի հիշողության, ուղեղի հասկացութային համակարգի, աշխարհի պատկերի օպերատիվ բովանդակային միավորներ են [6: 186; 4]:

Ըստ Ստեպանովի՝ «Հասկացույթը գոյություն ունի գիտակցության մեջ, մարդու (մենթալ աշխարհում): Այն ներկայացնում է պատկերացումների, հասկացությունների, գիտելիքների, զուգորդումների, ապրումների «փունջ»: Հասկացույթները մարդու գիտակցության մեջ մշակութային միջավայրի թանձրույթ են [8: 13]: Աշխարհի պատկերի ընդհանուր հասկացության շրջանակներում առանձնացնում են գիտական, լեզվական և հասկացութային աշխարհի պատկերները: Օտար լեզու ուսումնասիրելիս, սովորողները փորձում են յուրացնել նշված պատկերները: Ավանդաբար դպրոցում ուսումնասիրում են լեզվակիրների աշխարհի լեզվական պատկերը, այսինքն՝ աշխարհի մասին լեզվամշակութային հանրության առօրեական գիտելիքների ամբողջությունը, որն արտացոլված է կոնկրետ լեզվի իմաստաբանության և քերականության մեջ: Հանրամշակութային

երևույթների ուսուցանումը դժվարանում է, քանի որ շեշտը դրվում է սովորողների լեզվական աշխարհի ձևավորման վրա, իսկ աշխարհի հասկացութային պատկերը մղվում է հայտնի և անհայտ պատճառներով հետին պլան։ Աշխարհի հասկացութային պատկերն արտացոլում է իրական աշխարհն այն հասկացությունների միջոցով, որոնք հիմնվում են էմպիրիկ եղանակով ձեռք բերված և մարդկանց գիտակցության միջով անցած պատկերացումների վրա։ Ակնհայտ է, որ այստեղ մենք գործ ունենք միայն կոնկրետ լեզվական հանրության բնորոշ երևույթների, իրողությունների, հանրամշակութային իրակությունների հետ։ Խնդիր է դրվում կիրառել փոխհատուցող ռազմավարություն, որի նպատակն է լրացնել լեզվակիրների հետ անմիջական շփման բացը, առանց ապրելու լեզվակիրների համար բնական համարվող լեզվական միջավայրում, մոդելավորել իրական լեզվական իրադրություններ։

Լուրջ դժվարություն է ներկայացնում լեզվակիրների հաղորդակցական վարքագիծը, համապատասխան ազգամշակութային դրսևորումները բացահայտելը, տվյալ էթնոսի աշխարհայացքը, արժեքային համակարգը հասկանալը։ Խնդիր է դրվում մոդելավորել ուսումնական պայմաններում լեզվակիրների հանրամշակութային բովանդակության հարաբերությունները, օրինակ՝ ուսումնասիրել ուսուցողական նպատակներով լեզվակիրների ծեսերը, ծիսակատարությունները, արարողակարգերը, տոներն ու տոնակատարությունները։ Իր արդյունավետությամբ աչքի է ընկնում լեզվամշակութային թվարկած և այլ իրողությունների ուսուցման ճանաչողական ռազմավարությունը։ Ընդ որում, շատ դեպքերում վերճանաչողական ռազմավարության կիրառումը կարող է խոչընդոտել հաղորդակցական ռազմավարության կիրառմանը։ Այլ հարց է, թե սովորողները ինչ լեզվական մակարդակ ունեն։ Ակնհայտ է, որ բարձր լեզվական մակարդակ ունեցող սովորողը կարող է վերլուծել տվյալ հանրամշակութային իրողությունը դասընկերների հետ ակտիվ շփման ընթացքում։

Կիրառելով համետական ռազմավարություն, հնարավոր է դառնում հարստացնել սովորողների զուգորդական դաշտը, օգտագործել նրանց հանրամշակութային հաղորդակցման դրական փորձը, վեր հանել մայրենի և ուսումնասիրվող լեզուները ներկայացնող լեզվամշակութային հանրությունների նմանությունները և տարբերությունները։

Կիրառելով գծագրական դասակարգիչներ, հնարավոր է դառնում ապահովել օտար լեզվի դասերին սովորողների բարձր ներգրավվածությունը։ Հասկացութային մոտեցումը հնարավորություն է ընձեռում աշխատանքը ծավալել կոնկրետ հասկացույթների շուրջ։ Օրինակ՝ կարելի է համեմատել անգլերեն և հայերեն լեզուներում այն հասկացությունները, որոնք վերաբերում են «Տարածություն» հասկացույթին։

Հանրամշակութային կոմպետենցիայի զարգացման տեսանկյունից կարևորվում է ոչ միայն «տարածություն», այլև «մշակութային տարածություն» հասկացույթը։ Մշակութային տարածքը մեկնաբանվում է որպես արժեքների տարածություն, որն արտացոլում է տվյալ հասարակության հոգևոր և նյութական մշակույթի բովանդակությունը։ Բիստրովան գրում է. «Մեր տեսանկյունից մշակութային տարածության կառուցվածքում կարելի է առանձնացնել հետևյալ բաղադրիչները. իրական աշխարհի տարածությունը (աշխարհագրական, ֆիզիկական); սոցիալական տարածք, տեղեկատվական-նշան և ինտելեկտուալ տարածություն» [1: 98]։ «Մշակութային տարածքը պետք է դիտարկել որպես մարդկային մշակույթի նյութական և հոգևոր բաղադրիչների ամբողջությունը, իր կազմով և աքսիոլոգիական բովանդակությամբ տարասեռ՝ կախված որոշակի տարածաշրջանային ենթամշակույթի տարածման տարածքից (համաշխարհային մշակույթի շրջանակներում)։ Մշակութային տարածքը միասնական չէ։ Այն մշակույթների (էթնիկ, հոգեւոր, կրոնական, նյութական և այլն) ամբողջություն է» [3: 145-156]։

Ընդհանուր առմամբ «տարածք», «տարածություն», «տիրույթ» հասկացույթների իմաստային-զուգորդական դաշերի աստիճանաբար յուրա-

ցումն անհրաժեշտ պայման է հայալեզու սովորողի համար բավականին լուրջ դժվարություն ներկայացնող հանրամշակութային հասկացությունները հասկանալու, իրենց օտարալեզու խոսքում կիրառելու համար: Հանրամշակութային հասկացությունների ուսուցման տեսանկյունից կարևորվում են ոչ խոսքային հաղորդակցությանը վերաբերող հասկացույթները, օրինակ՝ հեռավորությունը: Էդվարդ Հոլը տարբերակում է հեռավորության չորս մակարդակ՝ ինտիմ, անձնային, հասարակական, հանրային [10]: Շփման առանձնահատկությունները ներկայացնող հասկացությունները շատ դեպքերում հանրամշակութային իրակություններ են, մշակութային լակունաներ: Օրինակ՝ հայալեզու սովորողը դժվարությամբ է հասկանում feet per second /վայրկանում մի ֆութ (հոսող ջրի չափման միավոր) արտահայտությունը: Հայախոս մարդը լսելով Can you still buy cloth by the yard in Britain? Հարցը, միանգամից կռահում է, որ խոսք է գնում ինչ-որ չափման միավոր մասին: Թարգմանելով նախադասությունը՝ Անգլիայում դեռևս կտորը չափում են յարդերով, նրանք բառարանը նայելուց հետո են միայն պարզում, որ յարդը 91, 44 սմ է կամ 3 ֆութը: Այդպիսի տեղեկատվությունը նրանք շատ արագ մոռանում են, քանի որ չեն գործածում իրենց առօրյայում «յարդ» հասկացությունը: Նրանք միայն հիշում են, որ յարդը մոտավորեապես մեկ մետրն է: Խնդիրն ավելի է բարդանում, երբ նրանք փորձում են թարգմանել մյուս յարդ բառով բառակապակցությունները՝ – cubic yard, – square yard, – by the yard, – yard of land: Այստեղ նպատակահարմար է կիրառել ճանաչողական ռազմավարություն՝ մեկնաբանել և թարգմանել տվյալ բառակապակցությունները:

Անգլերենի ուսուցման դպրոցական դասագրքերում մեծ տեղ է հատկացվում հատկապես «իրական աշխարհի տարածությանը» վերաբերող հասկացությունների ուսուցմանը, սակայն «սոցիալական տարածքին» վերաբերող հասկացությունների ուսուցմանն անհրաժեշտ ուշադրության չի արժանանում: Շփման թե՛ մերձակա, թե՛ հեռակա գոտիներին վերաբերող արտահայտությունների ուսուցումը կարևոր է, քանի որ դրանք

բազմաշերտ են և անուղղակի կամ ուղղակիորեն արտացոլում են տվյալ լեզվական հանրության մենթալիտետի, ոչ խոսքային հաղորդակցության առանձնահատկությունները: Ընդ որում, ցանկացած հաղորդակցություն պետք է ուսումնասիրել համաժամանակյա և տարժամանակյա կտրվածքներով. այն առումով, որ այն ժամանակի ընթացքում փոփոխվում է: Հատկապես դա ակնհայտ է, երբ հաղորդակցության գենդերային հայեցակերպն ենք լուսաբանում:

«Ամեն խոսույթ խոսում է տարածության մասին: Պետք է տարբերակել խոսույթը տարածության մասին, տարածության մեջ և տարածության խոսույթը» [9], ցիտ ըստ [5: 154–155]: Ներկայացնելով հանրամշակութային երևույթները տվյալ լեզվամշակութային տիրույթում, մենք կարողանում ենք վերարտադրել լեզվական հանրությանը բնորոշ խոսույթի բնութագրող գծերը: Նկարագրական մակարդակում մենք կիրառում ենք ճանաչողական ռազմավարություն: Բացատրելու մակարդակում կիրառվում է վերճանաչողական ռազմավարություն: Այդ մակարդակում սովորողները ներգրավվում են յուրահատուկ խոսույթաստեղծ գործունեության մեջ:

Գծագրական դասակարգիչների օգտագործումը արդյունավետ է տարբեր ռազմավորությունների կիրառման ընթացքում: Դրանց կիրառումը միտված է նախ և առաջ ստացած տեղեկատվությունը համակարգելուն: Փաստորեն, այստեղ խոսք է գնում գծագրական, գրաֆիկական կամ գրային ռազմավարության կիրառման մասին, որը ուսուցման գործընթացը դարձնում է ավելի առարկայական, հնարավորություն է ընձեռում քննության առնել ուսուցանվող երևույթները զննականության սկզբունքի պահանջները հաշվի առնելով: Սովորողները կարող են գծագրական ռազմավարության կիրառման արդյունքում համեմատել, օրինակ անգլիական և հայկական ավանդույթները, սովորույթները, ծեսերը և այլն: Կոնկրետ կարելի է կիրառել Վենի դիագրամ, պրիզմայի մեթոդ, կամ հասկացութային քարտեզ: Տարբեր հանրամշակութային հասկացույթների՝ /կերակրատեսակներ, հագուստ, խոհանոց և այլն/ արդյունա-

վետ կարող են լինել հիշողության քարտեզը (mind map)[1]. համարժեքների ընտրությունը, լակունաների առանձնացումը[2], հասկացույթի մոդելավորումը, ֆիշբունը (fishbone)[3], զուգորդագիրը կամ ասոցիագրաման։ Ակնհայտ է, որ նշված և այլ գծագրական դասակարգիչները արդյունավետ գործիք են վերճանաչողական ռազմավարության կիրառման գործընթացում։

Հաղորդակցական մոտեցման մեթոդաբանության համատեքստում առաջին պլան են մղվում հաղորդակցական-ճանաչողական, փոխներգործուն, հուզական և մեկնաբանող ռազմավարությունները։

Փոխներգործուն ռազմավարությունները կարելի է կիրառել ուսուցման բոլոր փուլերում։ Կիրառելով տարբեր փոխներգործուն մեթոդներ, սովորողները կարողանում են ստեղծել պրոբլեմային իրադրություններ, մենկաբանել առանձին հանրամշակութային երևույթներ, մոդելավորել հանրամշակութային նշույթավորում ունեցող իրադրություններ, կիրառել խաղային տեխնոլոգիաներ (հաղորդակցական խաղեր, դերային խաղեր, մոդելավորում)։

Հաղորդակցական խաղերը հնարավորություն են տալիս սովորողներին հանրամշակութային բովանդակության լեզվանյութը։ Օրինակ՝ կարելի է ասոցիագրամայի, հասկացութային քարտեզի միջոցով լրացնել «ժամանակ» հասկացույթի իմաստային դաշտը։ Սովորողները կարող են կիրառել բոլոր հնարավոր այն արտահայտությունները, որոնք վերաբերում են տվյալ հասկացույթին։

---

[1] A Mind Map մտագրոհի հեշտ եղանակ է, առանց հաշվի առնելու կարգը և կառուցվածքը։ Այն հնարավորություն էընձեռում պատկերացնել քո գաղափարների կառուցվածքը, օգնում է վերլուծել և մտապահել։

[2] Լակունա (լայն իմաստով) – մշակույթի ազգային յուրահատուկ տարր, որն իր արտացոլում է գտել լեզվում, որը կամ ամբողջությամբ չի հասկացվում, կամ հասկացվում է թերի այլ լեզվամշակույթի կրողների հետ շփման ընթացքում։

[3] A fishbone diagram ձկան ոսկոր դիագրաման պատճառի և հետևանքը դիտարկելու զննական եղանակ է։ Այն պրոբլեմ լուծելու կառուցվածքային եղանակ է և համարվում է մտագրոհ կազմակերպելու մատչելի գործիք։

Անգլերենում «ժամանակ» հասկացույթը նշանակում է րոպեներով, ժամերով չափվող ժամանակահատված. What time are you going out tonight?

– Ինչ-որ մեկի տրամադրության տակ գտնվող ժամաքանակ.

We have all the time in the world (=have plenty of time).

– Պատմության որոշակի շրջան, դարաշրջան.

Mankind has used the horse since ancient times;

– Որևէ մեկի համար հարմար, անհարմար ժամանակահատված.

– It's hard time for her but she will cope with all the problems, I'm sure.

Հայախոս սովորողների համար հանրամշակութային իրակություն են AM = Ante meridiem: Before noon և PM = Post meridiem: After noon հասկացությունները: Ինչպես նշում է Ե. Ա. Նիլսենը. «ժամանակ» հասկացույթը կարող է նշանակել ինչ-որ բանի մաս, ինչ-որ ժամանակահատված, պահ, ժամանակի տևողություն իր առարկայական և իրադարձային համալրմամբ» [4: 214]:

Եթե փոխներգոծուն մեթոդների կիրառումը հիմնականում պահանջում է հաղորդակցական, ճանաչողական ռազմավարությունների կիրառում, ապա մեկնաբանության տեխնոլոգիայի հիմքում ընկած է վերճանաչողական ռազմավարությունը : Այն ինչպես Մ.Ն. Զախարենկովան է նշում. «մենթալ գործունեություն է ենթադրում, որը միտված է ընթերցած տեքստի իմաստը վեր հանելուն և պահանջում է հիշողության աշխատանք, որը ներառում է տարբեր մտավոր գործառնություններ՝ համեմատություն, վերլուծություն, սինթեզ, ընդհանրացում, վերացարկում և կոնկրետացում» [2: 211]: Օրինակ՝ վերլուծելով կամ մեկնաբանելով գեղարվեստական տեքստը, սովորողները քննության առարկա են դարձնում ոչ մեծ դարձվածքային միավորները, վեր են հանում հանրամշակութային բնույթի տեղեկատվություն: Դա կարող է վերաբերել գործող հերոսների հագուստին, սննդակարգին, սովորույթներին, կյանքի տեմպին, նրանց կողմից տարածության և ժամանակի ընկալմանը և այլն: Կարևորվում է

հատկապես հանրամշակութային իրակությունների և փաստերի մեկնաբանության հիմնախնդիրը:

Հուզական կամ հուզազգայական ռազմավարության կիրառումը նպատակ ունի մյուս ռազմավարությունների կիրառման համար բարենպաստ մթնոլորտ ստեղծել, քանի որ դրական հուզական դաշտը արագացնում է յուրացման, ամրապնդում է մտապահման և հասկանալու գործընթացները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հոդվածում ներկայացվում են ավագ դպրոցականի հանրամշակութային կոմպետենցիայի ձևավորման և զարգացման ռազմավարությունները հաղորդակցական-ճանաչողական, հասկացութային մոտեցումների տեսնկյուններից: Փորձ է արվում հիմնավորել վերճանաչողական, ճանաչողական, փոխհատուցող, գծագրական և այլ ռազմավարությունների կիրառման արդյունավետությունը հանրամշակութային երևույթների ուսուցման գործընթացում, հաշվի առնելով սովորողների ոչ միայն լեզվական աշխարհի, այլև հասկացութային պատկերի աշխարհի ձևավորման առանձնահատկությունները:

Խնդիր է դրվում մոդելավորել ուսումնական պայմաններում լեզվակիրների հանրամշակութային կոմպետենցիայի ձևավորման պայմանները, բովանդակությունը, առանձնացնելով ուսուցողական նպատակներով լեզվակիրների ծեսերը, ծիսակատարությունները, արարողակարգերը, տոներն ու տոնակատարությունները:

Ներկայացնելով հանրամշակութային երևույթները տվյալ լեզվամշակութային տիրույթում, խնդիր է դրվում ուսումնասիրել տարբեր ռազմավարությունների կիրառմամբ «տարածք», «ժամանակ» և այլ հասկացույթների իմաստային-զուգորդական դաշտերը տարբեր բառային միավորների յուրացման մակարդակում: Յուրացնելով այս կամ այն հասկացույթի իմաստային դաշտը, ստեղծվում են անհրաժեշտ նախադրյալներ

տվյալ լեզվական հանրությանը բնորոշ խոսույթի բնութագրող գծերը վերարտադրելու համար: Հանրամշակութային երևույթների ուսումնասիրության ռազմավարությունները քննության են առնվում տարբեր՝ նկարագրական, բացատրական, վերարտադրողական մակարդակներում:

Անգլերենի ուսուցման գործընթացում կարևորվում է գծագրական դասակարգիչների կիրառումը, որոնք արդյունավետ ուսուցողական գործիք են թե՛ ճանաչողական, թե՛ վերճանաչողական ռազմավարությունների կիրառման գործընթացում:

ЛИТЕРАТУРА

1. *Быстрова А.Н.* Культурное пространство как предмет философской рефлексии // Философские науки, 2004, №12. – СС. 24–40.
2. *Захаренкова М.Н.* Информационная компетенция студентов языкового вуза и интепретация иноязычного художественного текста // Проблемы формирования социокультурной и когнитивной компетенции в практике преподавания иностранных языков. – Нижний Новгород: НГЛУ им. Н.А. Добролюбова, 2006. – СС. 208–217.
3. *Касаткин П.И.* Культурное пространство: аксиологический аспект // Проблемы культурологии, 2017, №4. – СС. 145–156.
4. *Нильсен Е.А.* К экспликации концепта «время» в английском языке // Вестник СамГУ, 2006, №10/2 (50). – СС. 211–217.
5. *Палагута В.И.* Социальное пространство как концепт социально-философского исследования. Науковий вісник Чернівецького університету, 2008. 2–16 [Электронный ресурс]. – Режим доступа: https://www.researchgate.net/profile/Vadim (Дата обращения: 12.03.2022г.).
6. *Романович Н.Н.* Концепт «Время» и его отражение в английской лингвокультуре. БрГУ имени А. С. Пушкина (Беларусь), 2015. – СС. 186–189.
7. *Собинова Л.А*. Значение когнитивных стратегий в обучении профессионально-ориентированному иноязычному чтению студентов технического вуза // Филологические науки. Вопросы теории и практики. – Тамбов: Грамота, 2014. – №6 (36): в 2-х ч. – Ч. II. – СС. 183–186. ISSN 1997-2911.
8. *Степанов Ю.С.* Константы: Словарь русской культуры: Изд. 2-е, испр. и доп. – М.: Академический проект, 2001 – 590 с.
9. *Lëfebvre H.* La production de l’espace. 4e èd. – Paris: Anthropos. 2000. – PP. 15–

32.
10. *Hall E.T. & Hall M.R.* Key concepts: Underlying structures of culture. In J.N. Martin, T.K. Nakayama & L.A. Flores (Eds.) Readings in intercultural communication: Experiences and contexts. USA: The McGraw-Hill Companies, Inc. 2010. – PP. 165–171.
11. *O'Malley J.M.* Learning Strategies in Second Language Acquisition / J.M. O'Malley, A. Chamot. Cambridge: Cambridge University Press, 1990. Vol. 67, №2. – PP. 416–417.
12. *Oxford R.* Language learning strategies in a nutshell: Update and ESL suggestions // TESOL Journal, 1992/1993, № 2(2). – PP. 18–22.
13. *Tarone E.* Some thoughts on the notion of 'communication strategy' / E. Tarone, C. Faerch, G. Kasper // Strategies in Interlanguage Communication. – London: Longman, 1983. – PP. 61–74.

ԱՎԱԳ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՅԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ի.Կ. Կարապետյան
igorkarapetian@gmail.com

Մ.գ.դ., պրոֆեսոր,
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի
Ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման
մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսոր,
Երևան, Հայաստանի Հանրապետություն

Է.Ս. Ավետիսյան
avetisyan.elen@inbox.ru

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի
հենակետային վարժարանի անգլերենի ուսուցչուհի,
Երևան, Հայաստանի Հանրապետություն

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննության են առնվում հանրամշակութային կոմպետենցիայի զարգացման ռազմավարությունները, հաշվի առնելով անգլերենի ուսուցման առանձնահատկություններն ավագ դպրոցում: Ընդհանուր բնութագրերով ներկայացված են անգլերենի ուսուցման այն ռազմավարությունները, որոնք արդյունավետ են սովորողների հանրամշակութային կոմպետենցիայի զարգացման գործընթացում:

Ներկայացվում են հանրամշակութային կոմպետենցիայի հիմնական բաղադրիչները՝ լեզվաբանական, խոսութային և այլ կոմպետենցիաները:

Սահմանվում են վերճանաչողական, ճանաչողական, հաղորդակցական, հուզական, փոխհատուցող, համեմատական և գրաֆիկական ռազմավարությունները: Փորձ է արվում հասկացութային մոտեցման տեսանկյունից ներկայացնել հանրամշակութային երևույթների, իրողությունների, իրակությունների ուսուցման ռազմավարությունները: Խնդիր է դրվում հանրամշակութային երևույթների ուսուցանումն իրականացել ոչ միայն սովորողների լեզվական աշխարհի, այլև նրանց աշխարհի հասկացութային պատկերի ձևավորման տեսնակյունից: Դասակարգվում և վերլուծվում են հանրամշակութային երեվույթների ուսուցման տեխնոլոգիաներն ըստ ուսուցման ռազմավարությունների:

Բանալի բառեր՝ հանրամշակութային կոմպետենցիա, ռազմավարություն, վերճանաչողական, փոխհատուցող, հուզական-զգայական, գրաֆիկական, հասկացութային, տեխնոլոգիա, լեզվական աշխարհ, հասկացութային աշխարհ:

STRATEGIES FOR THE FORMATION AND DEVELOPMENT OF SOCIO-CULTURAL COMPETENCE OF HIGH SCHOOL STUDENTS

I. Karapetyan
igorkarapetian@gmail.com

Doctor of Pedagogical Sciences, Professor,
Professor at the Department of Romano-Germanic Languages and their Teaching Methods,
Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan,
Yerevan, Republic of Armenia

E. Avetisyan
avetisyan.elen@inbox.ru

English language teacher in base High-School College,
Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan,
Yerevan, Republic of Armenia

ABSTRACT

The article presents the strategies for forming and developing high school student's socio-cultural competence from the point of view of communicative-cognitive, conceptual approaches. An attempt is made to substantiate the effectiveness of the application of metacognitive, cognitive, compensatory, graphic and other strategies in the process of teaching socio-cultural competence phenomena, taking into account the peculiarities of drawing not only the student's language image of world, but also the world of conceptual image. The task is to model the conditions and content of the development of the socio-cultural competence of native speakers in educational conditions, studying the rituals, ceremonies, holidays and celebrations of native speakers for educational purposes.
Keywords: socio-cultural competence, strategy, cognitive, compensatory, affective-emotional, graphic, conceptual, technology, language picture, conceptual picture.

Информация о статье:
статья поступила в редакцию 24 марта 2022 г.,
подписана к печати в номер 9 (13) / 2022 – 03.05.2022 г.